Արագ մեկնարկի ուղեցույց

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿԸ

Նախքան ուսուցումը սկսելը

1. Ուսումնասիրեք ընթացիկ տարվա սեմինարիայի ուսուցչի ձեռնարկի ներածությունը, որպեսզի ծանոթանաք ձեռնարկում ներառված որոշ գործիքներին, որոնք կօգնեն ձեզ:
2. Ձեր տեղական սեմինարիայի դասացուցակի համար ձեռք բերեք դասերի ժամանակացույցի ուղեցույցը ձեր Ս&Ի համակարգողից կամ ծրագրի ղեկավարից:
3. Օգտագործեք այդ ժամանակացույցի ուղեցույցը և բացահայտեք հաջորդ դասը, որը դուք կուսուցանեք:

Սեմինարիայի ուսուցչի ձեռնարկի ակնարկ

- Այս ձեռնարկը նախատեսված է յուրաքանչյուր շաբաթվա *Եկ, հետևիր ինձ* ուսումնական նյութի հետ համաձայնեցնելու համար և ներառում է հինգ դաս յուրաքանչյուր շաբաթվա համար:
- Հինգ դասերի յուրաքանչյուր խումբ առանձնացված է փաստաթղթով, որը ներկայացնում է յուրաքանչյուր դասի համառոտ ակնարկը: Այդ ակնարկը ընդգրկում է՝
  - դասի նպատակները,
  - ուսանողի նախապատրաստման գաղափարներ,
  - առարկայական դասերի ցանկ, թերթիկներ, պատկերներ, տեսանյութեր կամ այլ նյութեր, որոնք պետք է նախօրոք պատրաստվեն, և
  - տեսակապով առցանց ուսուցման առաջարկներ:
- Ամեն շաբաթը ներառում է վարդապետության սերտման առնվազն մեկ ուսուցման փորձառություն:
- Պարբերաբար ներառվում է «Գնահատեք ձեր գիտելիքները» դասը, որն օգնում է ուսանողներին մտածել այն մասին, թե ինչ են սովորում, և ինչպես են աճում գիտելիքների, վերաբերմունքի և վարքագծի առումով, որոնք խորացնում են դարձը և օգնում նրանց ավելի նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Լրացուցիչ ուսուցում

Սեմինարիայի ուսուցիչների ձեռնարկի ներածության հետ մեկտեղ լրացուցիչ ուսուցման համար հասանելի են հետևյալ նյութերը.

- Ուսուցողական հանդիպումներ ձեր համակարգողի կամ ծրագրի ղեկավարի հետ՝ ձեր ունեցած հարցերին անդրադառնալու և դասավանդման հմտությունները կիրառելու համար
- Ուսուցիչների կատարելագործման հմտություն-ներ. Ուսուցում
- Ընդունեք, ապա հարմարեցրեք սեմինարիայի ուսումնական ծրագիրը. Ուսուցում
- Վարդապետության սերտում. ուսուցում
- Գնահատումներ. Ուսուցում



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 9/21. *Seminary Curriculum Training*–ի թարգմանությունը.
Armenian. PD60013871 201. Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում